

## ՅՈՎՍԵՓ Ծ. ՎՐԴ. ՄԱՍՈՒՐ

(1907 - 1987)

30 Յուլիս, Հինգշաբթի լուսաբացին, Թրանսական հիւանդանոցին մէջ ի Տէր հանգեաւ Ս. Ռիխտիս երէց Միաբաններէն Հողշ. Տ. Յովսէփ Մ. Վրդ. Մամուր, 80 տարեկանին: Հայրսուրբը քանի մը տարիներէ ի վեր կը մնար Եգիպտոս, իրեններուն մօտ, խանգարուած առողջութեամբ:

Հայր Յովսէփ, աւազանէն ալ նոյն անունը առած, ծնած է Աղեքսանդրիա՝ 1907 թուականին: Կը սերէր ծանօթ գերդաստանէ մը, մէկէ աւելի մտրի մարդերով ծանօթ: Մննդավայրի Պողոսեան ազգ. վարժարանը աւարտելի ետք Լուտոնի մէջ հնատեւած է բարձրագոյն ուսման: Լաւ հաշուագէտ էր եւ զիտէր քանի մը եւրոպական լեզուներ:

1950ին, զգալով իր մէջ կրօնաւորելու փափարը, կու զայ երուսաղէմ եւ ատեն մը կը ծառայէ Արբատեղեաց եւ Ա. Աթուառյու Դիւանատան մէջ: 1954ին Սարկաւագ է արդէն, իսկ 1956ին Արեղայ՝ ծնոնադրուելով Պատր. Տեղապահ Տ. Եղիշէ Արբագանէն (այժմու Պատրիարքը): Վարած է այնուհետեւ Ելեւմտից Տեսչի եւ Հակակշոռողի պաշտօնները: Թիտոյ նշանակուած է ժամօրինող Մայր Տաճարի: Աւելի ուշ մեկնած է Սուտան եւ ապա Գահիրէ, ուր ատացած է Մայրագունութեան աստիճան:

Հայր Յովսէփ շնորհի իր հմտութեան, ունեցած է ծանօթներու լայն շրջանակ եւ այլակու հրատարակութիւններու նոխ հաւաքածոյ: Կազմած էր նաև պահանածը, կատարելու համար այլատեսակ ուսումնասուրութիւններ:

Հանգուցհալին մարմինը ներխ երեկոյ Թափօրով փոխադրուեցաւ Մայր Տաճար: Վերջին օծումն ու թաղումը կատարուեցան յաջորդ օր, 31 Յուլիս, Ռուբաթ առաւոտ: Ա. Պատարազը Աւագ Անդանին վրայ մատոյց Հողշ. Տ. Ռուրէն Վրդ. Յովսէփիմեան: Վերջին օծումը կատարեց եւ յուղարկաւորութեան թափօրին նախազահեց Լուսարարապետ Դիրէ: Տ. Վարենգին Արքեպոս: : Բնվանդակ Միաբանութիւնը թիւնք ըերաւ իր մասնակցութիւնը: Ա. Փրկչէն դարձին՝ հոգեսուրճ տրուեցաւ Թարգմանատան մէջ:

Աստուած իր լոյսերուն արժանի թող ընէ հոգին իր պաշտօնիային:

● Դ. 7 Յուլիս: — Դիրէ Տ. Կիւրեղ Եպոս: մեկնեցաւ Լիբանան, գորոգական նոր տարեշընին համար աշակերտուեր արձանագրելու և վերադառն Աւ. 31 Յուլիսին:

● Դ. 14 Յուլիս: — Թրանսական Եղագափոխութեան 128րդ տարեդարձին առիթով, Ֆրանսական Բնդշ. Հիւզագատուսին կողմէ, Հիւզագատուսարանի պարտէզին մէջ արուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Դիրէ: Տ. Վարենգին Արքեպոս, Հողշ. Տ. Անուշաւան Վրդ. և Տիար Դիրէր Հիւզագատուս:

● Դ. 15 Յուլիս: — նոյն առթիւ, Տ. Անն Եկեղեցոյ գաւթիւն մէջ արուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հողշ. Տ. Անուշաւան Վրդ. և Տիար Դիրէր Հիւզագատուս:

● Ե. 23 Յուլիս: — Հին Քաղաքի նոր Ռոտիկանապետի նշանակման առթիւ, Վանուցս մօտակայ Զօրանոցը գացին Հողշ. Տ. Անուշաւան Վրդ. և Տիար Գ. Հիւզագատուս:

● Բ. 27 Յուլիս: — Խուալիչէն Ս. Աթոռ Ժամանեց Ս. Ռիխտիս երիսասարդ Միաբաններէն Հողշ. Տ. Խաժակ Վրդ. Վարամեան որ ատենէ մը ի վեր կ'ուսանի Հողշի մէջ, Մեկնեցաւ Գոստուսի սկիզբաները:

● Դ. 28 Յուլիս: — Մասկուայէն ժամանած թուարձրաստիւան հոգեւորականներու: (Տ. Ֆիւլարէթ Արքեպոս կ գլխաւորութեամբ) Ներկայութեամբ, Russian Compoundի փոքր եկեղեցիին մէջ, Թուարձրական Պատուի իրականացնելու հրուսազէմի մէջ Հաստատման 140ամեակի առիթով կատարուած հանդիսութեան և անոր յաջորդող ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Դիրէ: Տ. Վարենգին Արքեպոս, Հողշ. Տ. Անուշաւան և Խաժակ Վարդապետին եւ Տիար Գ. Հիւզագատուս:

● Դ. 29 Յուլիս: — Առաւտուն, Թուարձրաստիւ եկեղեցուոյն մէջ, նոր խորանի մը օծման և Ս. Պատարագի և աղա, քաջի սրահին մէջ արուած ճաշկերպութիւն ներկայ եղան Հողշ. Տ. Անուշաւան և Խաժակ Վրդ. մը կարգաց:

● Դ. 30 Յուլիս: — Առաւտուն, Թուարձրաստիւ եկեղեցուոյն մէջ, նոր խորանի մը օծման և Ս. Պատարագի եւ աղա, քաջի սրահին մէջ արուած ճաշկերպութիւն ներկայ եղան Հողշ. Տ. Անուշաւան և Խաժակ Վրդ. և Տիար Գ. Հիւզագատուս:

— Երեկոյեան, գարձեալ Russian Compoundի մէջ արուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Դիրէ: Տ. Վարենգին Արքեպոս, Հողշ. Տ. Անուշաւան և Խաժակ Վարդապետ ներ և Տիար Գ. Հիւզագատուս: